# 1 ԹԵՄԱ

# Հայկական լեռնաշխարհը որպես համաշխարհային քաղաքակրթական բնօրրաններից մեկը: Հայոց հայրենիքը: Հայկական լեռնաշխարհի վաղ պետականությունները Ք.ծ.ա. III-I հազարամյակներում

## Դաս 1 Հայկական քաղաքակրթության ձևավորման և զարգացման պատմաաշխարհագրական միջավայրը: Հայոց հայրենիքը

### Գիտեք, որ...

- *Հնում Վանա լիճն ունեցել է յոթ կղզի, որոնցից երեքը ջրի տակ են անցել լճի մակերևույթի պարբերաբար բարձրանալու հետևանքով:*
- *Հայկական սկզբնաղբյուրներում «հայրենիք» հասկացությունն ավելի հաճախ արտահայտվում է «Հայոց աշխարհ», «երկիր», «թագավորություն» եզրույթներով:*
- *Հին և միջնադարյան Հայաստանում սեփականության ձևերից գլխավորը ևս կոչվում է «հայրենիք»:*
- *Հայկական լեռնաշխարհի և Առաջավոր Ասիայի միակ գործող հրաբուխը Թոնդրակն (Թոնդուրեկ) է՝ Ծաղկանց լեռներում:*

## Լրացուցիչ նյութեր

### Հայոց հողն ու ջուրը

*Պարսից Շապուհ II արքան գուշակներին լսելով՝ ուղտերով մարդիկ ուղարկեց Հայաստան, որ գնան այդ հմայության հողն ու ջուր բերեն: Քիչ օրերից հետո եկան ու բերին... Ապա Շապուհ թագավորը հրաման է տալիս իր խորանի հատակի կեսի վրա շաղ տալ Հայաստանից բերած հողը և վրան ջուրը ցողել, իսկ մյուս կեսը թողնել բնական հողով: Հայոց Արշակ թագավորին բերել տվեց և նրա ձեռքից բռնած ճեմելով շրջում էր: Խորանում երթևեկելիս, երբ ճեմում էին պարսկական հողի վրա, ասաց նրան.*

*Արշակ թագավոր հայոց, դու ինչո՞ւ ինձ թշնամի եղար, ես քեզ որդու նման սիրեցի, կամեցա աղջիկս քեզ կնության տալ, իսկ դու իմ դեմ խստացար, ինքդ քեզանից, հակառակ իմ կամքի, ինձ թշնամի դարձար և ամբողջ երեսուն տարի ինձ հետ պատերազմեցիր:*

*Արշակ թագավորն ասում է.*

*Մեղանչեցի և հանցավոր եմ քո առաջ, որովհետև ես եկա, քո թշնամիներին հաղթեցի ու կոտորեցի և հույս ունեի քեզանից կյանքի պարգև ստանալու, բայց իմ թշնամիներն ինձ մոլորեցրին, քեզանից վախեցրին և փախչել տվին: Եվ երդումս, որով քեզ երդվեցի, ինձ քո առջև բերեց, ես հիմա քո առջև եմ, քո ծառան քո ձեռքի տակ է, ինչպես ուզում ես՝ վարվիր ինձ հետ, եթե կամենում ես, սպանիր, որովհետև ես՝ քո ծառան, շատ հանցավոր եմ քո առաջ, մահապարտ եմ:*

*Շապուհ թագավորը նրա ձեռքից բռնած շրջում է ճեմելով և, իբրև միամտաբար, բերում է հայկական հող շաղ տված հատակի վրա: Իսկ երբ (Արշակը) այն տեղն է հասնում՝ հայկական հողի վրա ոտք է դնում, սաստիկ ըմբոստանալով, հպարտանալով լեզուն փոխում է, սկսում է խոսել և ասել.*

*Հեռու ինձանից, չարագործ ծառա, որ տերերիդ վրա տեր ես դարձել, և ես չեմ ների քեզ և քո որդոց իմ նախնիների վրեժը և Արտավան թագավորի մահը: Որովհետև այժմ դուք, ծառաներդ, ձեր տերերի՝ մեր բարձն եք հափշտակել, բայց ես չեմ թույլ տա այդ, մինչև դարձյալ մենք մեր տեղը չգրավենք:*

*Այսպես Շապուհը մի քանի անգամ փորձեց հայոց արքային: Ամեն անգամ հայտնվելով հայկական հողի վրա՝ Արշակն ավելի խիստ էր խոսում, իսկ հայտնվելով բնական հողի վրա՝ զոջում էր ու լալիս:*

*Ահա այսպիսին է հայրենի հողի ուժը:*

# Դաս 2 Հայաստանի պատմավարչական հիմնական բաժանումները հնագույն շրջանից մինչև այսօր

## Գիտեք, որ...

- *Հայկական լեռնաշխարհի պատմաաշխարհագրական տարածքը կրճատվել է 13 անգամ:*
- *Հույն աշխարհագրագետ Պտղոմեոսի վկայության համաձայն՝ Մեծ Հայքի տարածքը բաժանված է եղել 20 նահանգի:*
- *Հայկական աղբյուրները Կիլիկիան անվանել են «Հայոց աշխարհ», ինչպես բուն Հայաստանը, իսկ խաչակիր մատենագիրները՝ «Հայաստան», «Փոքր Հայք»:*
- *Մեծ Հայքի նահանգներից յուրաքանչյուրը հարևան նահանգներից բաժանված էր բնական պատվարներով (լեռներով, ձորերով) և, ըստ էության, կազմում էր ոչ միայն բնականից ստեղծված վարչական առանձին միավոր, այլ բնակլիմայական ինքնուրույն և ինքնատիպ մի ամբողջություն:*

## Լրացուցիչ նյութեր

### Հայաստանը Էլղանության կազմում

*XIII դարի կեսերին մոնղոլական տերությունը տարածվում էր Խաղաղ օվկիանոսից մինչև Միջերկրական ծովի ափերը: Այն բաժանված էր չորս խոշոր երկրամասերի, որոնք կոչվում էին ուլուսներ: Դրանցից մեկն ընդգրկում էր Միջին Ասիայի արևմտյան մասը, Պարսկաստանը, Ատրպատականը, Հայաստանը, Վրաստանը, ներկայիս Ադրբեջանի տարածքը և Փոքր Ասիայի մեծ մասը, իսկ 1258 թ.՝ նաև Միջագետքը: Մանգու խանի ժամանակ այս զորապետությունը դարձավ ժառանգական տիրապետություն և հանձնվեց նրա եղբայր Հուլավուին: Վերջինս ստիպված եղավ կտրվեց մեծ խաների ազդեցությունից և հիմնադրեց նոր պետություն, որը կոչվեց Էլղանություն: Այն բաժանվեց ռազմավարչական միավորների: Էլղանության մեջ մտնող Հայաստանից և Վրաստանից կազմվեցին ռազմավարչական երկու միավոր՝ վիլայեթներ: Դրանցից մեկը կոչվեց Գյուրջիստանի վիլայեթ, իսկ մյուսը՝ Մեծ Հայքի վիլայեթ: Գյուրջիստանի վիլայեթը կազմված էր Վրաստանից և Հյուսիսային Հայաստանից: Վիլայեթի կենտրոնը Թիֆլիսն էր: Մեծ Հայքի վիլայեթը կազմված էր Հարավային և Արևմտյան Հայաստանի տարածքներից՝ Խլաթ կենտրոնով:*

# Դաս 3 Հայկական լեռնաշխարհը որպես մարդկության զարգացման օրրան և հայոց քաղաքակրթության բնօրրան

## Գիտեք, որ...

- *Բանական մարդը հանդես է եկել 40 հազար տարի առաջ:*
- *Մինչև այժմ Երկիր մոլորակի վրա հայտնի ամենահին տաճարը հայտնաբերվել է Պորտաբլուր նեոլիթյան հնավայրում, որը գտնվում է Ուրֆա քաղաքից 15 կմ հյուսիս-արևելք:*
- *«Նեոլիթյան հեղափոխություն» հասկացությունը շրջանառության մեջ է դրել անգլիացի հնագետ Գորդոն Չայլդը:*
- *Տարբեր հուշարձաններից գտնված կանանց և կենդանիների արձանիկ-ները, կավակերտ օջախները վկայում են, որ Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչների կյանքում կարևոր դեր ունեին ծեսերն ու պաշտամունքը:*

## Լրացուցիչ նյութեր

### Անասնապահության առաջացումը

*Միջին քարի դարի ժամանակներում, նետ ու աղեղի գյուտից հետո, նեոլիթյան որսորդները չէին սպանում նետից վիրավորված վայրի կենդանիներին և դրանց ձագերին: Նրանց տանում էին իրենց բնակատեղ, պահում, մեծացնում՝ իբրև սննդամթերք օգտագործելու համար: Ժամանակի ընթացքում մարդը նկատում է, որ որոշ կենդանիներ ընտելանում են և անազատ պայմաններում աճում ու բազմանում: Այս պայմաններում ծնված ու բուծված կենդանիները դառնում են բոլորովին այլ կենդանի, արածում բնակավայրերին մոտ հանդամասերում և մարդկանց ապահովում կաթով, մսով, բրդով ու կաշվով: Այսպես Հայաստանում ընտելացվում են ոչխարը, այծը, կովը, խոզը և սկիզբ է առնում անասնապահությունը:*

## Ժողովրդական հանելուկները ժայռապատկերներում

*Գեղամա, Վարդենիսի, Սյունյաց և այլ լեռնաշղթաների ժայռապատկերները բազմազան են իրենց արտացոլած թեմաներով: Դրանցում կան մարդկանց կենցաղին, ծեսերին, զբաղմունքին վերաբերող տեսարաններ: Շատ հետաքրքիր է , որ զգալի թվով տեսարաններ, կարծես հատուկ արված են ժողովրդի հորինած հանելուկները պատկերազարդելու համար: Այսպես, ժայռապատկերների մի խումբ արտահայտում է ամպրոպի, կայծակի կամ տարերքի երևույթը: Դրանք ժայռի գլխին առանձին կանգնած այծեր են՝ իրանի, եղջյուրների միջև կամ գլխավերևում փորագրված խաչերով, շրջանակի դասավորված երկարուկ ձառագայթներով, որոնք մեջքից արձակվող պեծերի տպավորություն են թողնում: «Պեծավոր» այծերի այս պատկերը, կարծես արված է «Ինքը էծ, մեջքը պեծ» հանելուկը պատ–կերազարդելու համար: Հանելուկը կայծակի լակոնիկ մեկնաբանությունն է և նշանակում է կայծակ:*

*Կենդանիների պատկերների միջոցով նեոլիթի մարդիկ պատկերում էին ոչ միայն արև, լուսին, կայծակ, այլև ամբողջ աստղազարդ երկինքը: Գեղամա լեռներում դրանք ներկայացված են կենդանիների պատկերախմբի միջոցով, որը նույնանում է ժողովրդի հորինած հանելուկի հետ. «Սպիտակ քոլոզով քուրդը մի սուրու ոչխար կուշտը, զօր ու գիշեր աշխարհքին կաշե»: Քոլոզով քուրդ հովիվը արևն է կամ լուսինը, իսկ ոչխարները՝ լուսատուները և աստղերը:*

# Դաս 4 Հայերի ծագումնաբանությունը

## Գիտեք, որ...

- *Ֆրանսիացի քարտեզագիր Ֆիլիպ Բուաշեն 1783 թ. իր կազմած քարտեզի վրա դրախտը նշել է Հայաստանում:*

- *«Բավարական ժամանակագրության» համաձայն՝ «Երգ Ռոլանդի մասին» էպոսում և միջնադարյան այլ աղբյուրներում՝ բավարացիները նույնպես իրենց ծագումը կապում են Հայաստանի և հայերի հետ:*

- *Հնդեվրոպացիների խորհրդանիշը համարվող ձիու գլխի արձանիկների նմուշները գտնվել են Փոքր Ասիայում և Հայկական լեռնաշխարհում: Հնդեվրոպական ցեղերին բնորոշ են եղել նաև երկանիվ և քառանիվ սայլերը, որոնց ամենահին նմուշները գտնվել են Հայկական լեռնաշխարհում:*

- *Տարբեր ժամանակներում աշխարհում լույս տեսած բազմաթիվ քարտեզներում Հայաստանը նշված է ոչ թե սովորական երկիր, այլ՝ «դրախտ՝ երկրի վրա»:*

## Լրացուցիչ նյութեր

### Հայկ և Բել
### (հատված)

*...Բելը, հանդուգն ու հսկա ամբոխի զորությամբ, ինչպես մի մեծ հորձանք, զառիվայրից ներքև հեղեղվելով, շտապում է հասնել Հայկի բնակության սահմանները՝ վստահ լինելով զորավոր մարդկանց քաջության և ուժի վրա: Այս ժամանակ ուշիմ ու խոհեմ, գեղագանգուր ու զվարթաչյա հսկան շտապով հավաքում է իր որդիներին ու թոռներին՝ թվով շատ նվազ, քաջ և աղեղնավոր մարդկանց և ուրիշների, որ իրեն էին ենթարկվում, գնում հասնում է մի ծովակի ափ, որի ջրերն աղի են և իրենց մեջ մանր ձկներ են պարունակում: Իր զորքերին ձայնելով, ասում է նրանց.*

*«Երբ մենք դուրս կգանք Բելի ամբոխի դեմ, պետք է աշխատենք այն տեղին պատահել, որտեղ անցած կանգնած կլինի Բելը քաջերի բազմության մեջ, որպեսզի կամ մեռնենք, և մեր աղիը Բելի ծառայության տակ ընկնի, կամ մեր մատների հաջողությունը նրա վրա ցույց տանք, նրա ամբոխը ցրվի, և մենք հաղթություն տանենք»:*

*Հայկը խոցում է Բելին, նկարիչ՝ Ռ. Քոչարյան*

# Դաս 5 Հայկական լեռնաշխարհի վաղ պետականությունները Ք.ծ.ա. III-II հազարամյակներում

## Գիտեք, որ...

- *Ի հիշատակ Նաիրյան երկրների դեմ տարած հաղթանակի՝ Ասորեստանի թագավորներից մեկը Մանազկերտի դաշտում թողել է մի արձանագրություն, որը Հայաստանի տարածքում հայտնաբերված ամենահին արձանագրությունն է:*
- *Արատտայի բնակիչները հայ արիներն էին, որոնց առաքելությունն առաջադիմության տարածումն էր: Շումերական հնագույն բնագիրն ասում է, որ «իմաստությունն ու արվեստը» Արատտա երկրից է բերված:*
- *Թուրքիայի մայրաքաղաք Անկարայի մոտակայքում հայտնաբերված խեթական թագավորության հնադարանում գտնվել են 20 հազար սեպագիր կավե տախտակներ, որոնցում տեղեկություններ են հաղորդվում Հայասայի թագավորության մասին:*
- *Ասորական արքաներից մեկի՝ Հայկական լեռնաշխարհ կատարած արշավանքի ժամանակ, նրա դեմ է դուրս եկել Նաիրյան համադաշնության 23 թագավոր՝ 22 հազարանոց բանակով:*

## Լրացուցիչ նյութեր

### Ասորեստանի մեծամիտ տիրակալը

*Ք.ծ.ա. XIII դարի 2-րդ կեսին Ասորեստանում թագավորում էր Թիկուլթի-Նինուրթան (որոշ պատմաբաններ նրան նույնացնում են Նեբրովթ-Բելի հետ): Նա իր ռազմական արշավանքների մասին թողել է մի ընդարձակ տարեգրություն, որի մեջ գրում է. «... Ես իմ գերազանց հզորության ուժով անցա հզոր լեռները (խոսքը Հայկական Տավրոսի մասին է), որտեղ ճանապարհներ չկային, որոնց արահետների մասին ոչ մի թագավոր չի իմացել և հետո Նաիրի 43 երկրի թագավորներ հանդգնորեն շարք կանգնեցին ճակատամարտ տալու համար... Ճակատամարտում ես կռվեցի Նաիրիի 43 թագավորի դեմ, նրանց բանակներին պարտության մատնեցի, տիրացա նրանց բոլոր երկրներին, ես նրանց պարանոցներին հագցրի բրոնզե օղեր, ես նրանց բերեցի «Մեծ լեռան» տաճար՝ իմ սրբավայրը, Աշշուր աստծո առաջ»: Չնայած Ասորեստանի բռնակալ արքայի չափազանցրած ռազմական հաջողություններին, դրանից հետո նա այլևս չի համարձակվել արշավել Նաիրյան երկրների դեմ:*

# Դաս 6 Վանի թագավորության ձևավորման պատմաաշխարհագրական միջավայրը, թագավորության հիմնադրումը և վերելքը

## Գիտեք, որ...

- *Վանի միջնաբերդի մոտ Սարդուրի I-ի հսկայական քարերից կառուցած կիկլոպյան պարիսպն ուներ մինչև 6 մ երկարություն և 0,75 մ լայնություն:*
- *Մեզ հասած Ուրարտուի տեղական բոլոր վավերագրերը, Իշպուինի թագավորի ժամանակներից սկսած, բիայնական (ուրարտական) լեզվով են:*
- *Պատմական ավանդությունը ոչ միայն Մենուայի կառուցած 72 կմ երկարությամբ ջրանցքն է վերագրել Ասորեստանի թագուհի Շամիրամին, այլև Տուշպա-Վան մայրաքաղաքի կառուցումը, որի համար այն անվանվել է Շամիրամաշեն, Շամիրամակերտ:*
- *Տուշպա-Վան քաղաքի շրջակայքում թողած արձանագրություններից մեկում Մենուան փառաբանում է «Արծիվ» անունով իր նժույգին: Մի անգամ Մենուայի նժույգը թռել է 22 կանգուն (11 մ 39 սմ երկարություն), որն անգերազանցելի է մնացել մինչև 1975 թ.:*

## Լրացուցիչ նյութեր

### Իշպուինիի անտառը

*Վանի թագավոր Իշպուինին Արարատյան դաշտում և Վանա լճի շրջակայքում կառուցել է ամրոցներ, ապարանքներ, ոռոգելի առուներ, տնկել այգիներ և ծառաստաններ: Մեզ հասած սեպագիր արձանագրություններից մեկում գրված է, որ Սարդուրորդի Իշպուինին իր որդու՝ Մենուայի հետ հիմնել է խաղողուտ և Խալդի աստծուն նվիրված անտառ: Իշպուինին ծառ տնկելը և խաղողի այգի գցելը համարում էր հայրենասիրական, աստվածահաճո գործ և Վանի թագավորությունում այսպիսի կարգ էր սահմանել: Նոր տնկած ծառերը, երբ տերևակալում են, երեք ոչխար զոհաբերում են Խալդի աստծուն, երեք ոչխար էլ՝ մյուս բոլոր աստվածներին: Նորատունկ խաղողի վազից, երբ առաջին ողկույզն են կտրում, նորից երեք ոչխար զոհաբերում են Խալդի աստծուն և երեք ոչխար՝ մյուս աստվածներին: Նույն կերպ վարվում են խաղողից առաջին գինին ստանալու ընթացքում:*

# Դաս 7 Վանի թագավորության հզորացումն ու վերելքը

## Գիտեք, որ...

- *Գիտնականներից ոմանք ասում են, որ Էրեբունի նշանակում է հաղթանակ: Նրանց տեսության համաձայն, Արգիշտի I-ը նորակառույց քաղաքամրոցը կոչել է Էրեբունի՝ նկատի ունենալով իրենց շինարարական ոգու հաղթանակը:*

- *Արգիշտի I-ից և Սարդուրի II-ից հետո ուրարտական արքաներից ոչ մեկն այլևս փորձ չեն արել նվաճելու այնպիսի հեռավոր երկիր, ինչպիսին Բաբելոնն է:*

- *Արցախն առաջին անգամ հիշատակել է Սարդուրի II արքան՝ իր արձանագրություններում այն անվանելով Ուրտեխի:*

- *Գիտնականները ենթադրում են, որ Սարդուրի II-ը զոհ է գնացել պալատական հեղաշրջման և թաղվել Մուսասիրի տաճարի արքունի դամբարանում:*

## Լրացուցիչ նյութեր

### Հայրենի հողը վաճառողին չեն ներում

*Բիայնիլի երկրի իշխաններից մեկը, ում տիրույթը սահմանակից էր Ասորեստանին, վաճառեց տիրույթն ասորի արքային և ունեցած-չունեցածը վերցրած՝ տնով-տեղով փախավ ու բնավորվեց Հելլադա-Հունաստանում: Տեղեկանալով այդ մասին՝ Սադուրի II արքան զորք հավաքեց և հարձակումով իր տերությանը վերամիավորեց իշխանի վաճառած հողատիրույթը, ապա լրտեսներ վարձեց և ուղարկեց իշխանի հետևից:*

*Տեր արքա,- ասացին արքային այրերը,- արժի՞ մի իշխանի պատժելու համար այսքան գումարներ ծախսել:*

*Եթե նա դավաճաներ միայն ինձ,- պատասխանեց Սարդուրին,- գուցե ես այդքան դաժան վճիռ չկայացնեի, բայց չեմ կարող ներել հայրենի հողը թշնամուն վաճառողին: Այդպիսի դավաճանի հետևից պետք է գնալ մինչև աշխարհի վերջը, և դաժան մահով սատկացնել նրան: Հայրենի հողը վաճառողին չեն ներում, տիարք:*

# Դաս 8 Պայքար Ասորեստանի դեմ: Ռուսա I

## Գիտեք, որ...

- *Հայերը Կապադովկիան կիմմեների անունով կոչել են Գամիրք:*
- *Մուսասիրն առաջին անգամ հիշատակվել է Ք.ծ. ա. 879 թ. Ասորեստանի թագավոր Աշուրնազիրպալ II-ի՝ Նեմրութ լեռան տարածքում թողած արձանագրության մեջ:*
- *Ասորեստանի Սարգոն II թագավորը գերեվարել է Մուսասիրի արքա (կամ քրմապետ) Ուրզանայի կնոջը (Ուրզանան փախել էր), ուստրերին, դուստրերին, արքայական տան մյուս անդամներին և 6110 մարդ:*

## Լրացուցիչ նյութեր

### Մուսասիրի կողոպուտն ու թալանը

*Սարգոն II-ը Ք.ծ.ա. 714 թ. մտնում է Մուսասիր՝ այս երկրի թագավոր Ուրզանային պատժելու համար: Ասորեստանի թագավորը զայրացած էր Ուրզանայի վարմունքից, ով խուսափել էր դիմավորել և հարգանքներ մատուցել իրեն: Մուսասիրի արքայից նա պահանջում է, որ «առանց Ասորեստանի թագավորի հրամանի, ոչ ոքի թույլ չտա նույնիսկ բարի նպատակով մտնել Մուսասիր և մասնակցել պաշտամունքին», կատարել աղոթքներ: Բնական է, որ այս պահանջը մերժվում է: Սարգոնը խիստ բարկացած «իր միակ անձնական մարտակառքով ու հազար հեծելազորով» նետվում է նրա դեմ: Ուրզանային հաջողվում է փրկվել, բայց Սարգոնի ձեռքն է ընկնում նրա ընտանիքը՝ կինն ու զավակները, և գերի տարվում Ասորեստան: Սարգոնը կողոպտում է Ուրզանայի պալատը և Խալդ գերագույն աստծո տաճարն ու թալանում հսկայական ավար: Պալատից վերցվում է 34 տաղանդ ոսկի, 167 տաղանդ արծաթ, իսկ տաճարից՝ 4 տաղանդ ոսկի, 162 տաղանդ արծաթ, 3 հազար 600 տաղանդ մաքուր պղինձ:*

### Անգերազանցելի նետաձիգը

*Ռուսա I-ի որդի Արգիշտի II-ը, Ասորեստանի նման ռազմատենչ հարևան ունենալով, աշխատում էր բանակը միշտ պատրաստ պահել: Այդ նպատակով անցկացնում էր զորավարժություններ, իր նախնիների օրինակով ոգևորում զինվորներին: Եվ, ահա իր իրականացրած ռազմավարժանքներից մեկի ժամանակ Արգիշտին զարմանք է պատճառում իր նետարձակումով:*

*Վան քաղաքի Հայկավանք թաղամասում գտնվել է մի փոքրիկ սեպագիր քար: Դրա վրա արձանագրված է, որ Ռուսայի որդի Արգիշտին Տուշպա քաղաքին մերձ Գիշուրա գյուղի անտառի առջևից նետն արձակեց, որը հասավ մինչև Իշպիլե Բատուորդու այգին՝ 950 կանգուն: Կանգունը երկարության միավոր է, որը հավասար*

*է 51,8 սանտիմետրի: Այդ հաշվով Արգիշտի II-ը նետը արձակել է 492 մետր: Դա նշանակում է համաշխարհային ռեկորդ՝ բոլոր ժամանակների համար:*

*Թիգլաթպալասար III-ը Ուրարտուի մայրաքաղաք Տուշպայի մոտ, նկ.՝ Ա. Վեդերսթոուն*

# Դաս 9 Վանի թագավորության թուլացումն ու անկումը

## Գիտեք, որ...

- *Այն Բլուրը, որի վրա Ռուսա II-ը կառուցել է Թեյշեբանի քաղաք-ամրոցի միջնաբերդը, Կարմիր բլուր են կոչել շրջակա գյուղերի բնակիչները՝ XX դարի սկզբին բլրի կավի կարմիր շերտերի պատճառով:*

- *Վանա ծովի ափին գտնվող Թիլ ավանում արհեստավորաց մի տուն կար, ուր օբսիդիան էին մշակում: Դրանից պատրաստում էին պերճանքի իրեր և վաճառքի հանում շրջակա երկրներ: Այդ թանկարժեք քարը Տուշպա-Վանի անունով կոչվում է վանակատ:*

- *Հայ պատմիչ Մ. Խորենացին Ք.ծ.ա. 680-ական թթ. Ուրարտուի հյուսիս-արևելքում և արևելքում սկյութների հիմնած պետական կազմավորումը համարել է հայկական և անվանել Ասքանազ (Ասքանազյան թագավորություն):*

## Լրացուցիչ նյութեր

### Արքայի նվերը բազմազավակ կնոջը

*Տուշպա քաղաքի մի բնակչուհի 18 որդի է ծնում, ովքեր հերթով չորսական տարով զինվորագրվում էին արքայի բանակին: Լսելով այդ մասին՝ Վանի թագավոր Սարդուրի III-ը հրամայում է պարգևներ տալ այդ կնոջը. «Արքունիքի հաշվին մեկական տուն կառուցել նրա 18 որդիների համար, արքունիքի կառքերից մեկը հատկացնել բազմազավակ մորը»:*

*Հայրենիքին այդքան զավակներ տվող կնոջ ոտքը պիտի գետնին չդիպչի, – ասում է արքան իր մերձավորներին, – նա պիտի տեղից տեղ անցնի փափուկ կառքով:*

### Հումքը չի կարելի վաճառել

*Մի անգամ Ռուսա III արքային հայտնում են, որ Թիլ ավանի վանակատի արհեստավորաց տան տնօրենն էժան գնով քառասուն տոպրակ վանակատի հումք է վաճառում օտարերկրացիներին: Լսելով այդ մասին՝ արքան անմիջապես պատժեց արհեստավորաց տան տնօրենին և ազատեց նրան իր պաշտոնից:*

*– Բայց միթե՞ նրա արածը հանցանք է, – ասաց արքունի պալատականներից մեկը:*

*Այո՛, հանցանք է,– պատասխանեց Ռուսա III,– երբ դու զարդեղենի փոխարեն զարդեղենի հումքն ես վաճառում, դրսևորում ես քո ազնվությունը: Ճարպար ձեռք ունեն փուշպացիները, աշխարհում հազիվ թե այնպեսի զարդ լինի, որ նրանք չկարողանան պատրաստել: Ուզում ես ասել, որ արքունական զարդեղենի հումք վաճառելը նույն է, ոնց որ ցորենի փոխարեն ցորենի արտը վաճառես հարևանին, իսկ ցորենի արտը հայրենիքի մի մասն է:*

# Դաս 10 Վանի թագավորության պետական կառուցվածքը, բանակը

## Գիտեք, որ...

- *Ուրարտական արքաների որդիները և զարմերը, բացի թագաժառանգից, բնակվել են Վանա լճի հյուսիսային և արևելյան այն շրջաններում, որոնք կոչվել են Արմարիլի՝ «զարմ»-երի բնակատեղի:*

- *Սարգոն II-ի՝ Մուսասիրի տաճարից Ասորեստան տարած Արգիշտի I-ի բրոնզաձույլ անդրին կշռել է 2 տոննա:*

- *«Խորխորոյան» տարեգրության մեջ պահպանված հատվածների համաձայն՝ Արգիշտի I-ը Ուրարտու է բերել ավելի քան 320 հազար ռազմագերի:*

- *Երևանում գտնվող Թեյշեբաինի (Կարմիր բլուր) ամրոց-քաղաքի մոտ մինչև օրս պահպանվել է Ռուսա II-ի կառուցած Ումշենի ջրանցքը, որը Հրազդան գետից թունելի միջոցով ջուր է մատակարարել Արարատյան դաշտին:*

## Լրացուցիչ նյութեր

### Ուրարտական արքունիքը

*Ուրարտական արքունիքի մասին դատելու համար առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Թոփրակ-Կալեի պեղումներից հայտնի սեպագիր աղյուսակը, որը պարունակում է Ռուսախինիլի մայրաքաղաքի պալատական անձնակազմի ցուցակը: Այն բաղկացած է եղել 5507 մարդուց, որոնց թվում 113 անվանի անձ (պալատականներ), 3784 ներքինի, պալատի 162 ծառայող, ինչպես նաև ավելի քան 400 այլ անձեր: Պետության եկամտի գլխավոր աղբյուրը ոչ միայն արքայական տնտեսություններն էին, այլև հարկահանությունը հպատակեցված երկրներից ու մարզերից: Ուրարտացիների՝ միևնույն երկրների դեմ ձեռնարկած հաճախակի արշավանքների պատճառը պետք է որոնել գլխավորապես պարտադրվող հարկերը բռնագանձելն էր: Պատահական չէ, որ ուրարտական թագավորները ձեռնպահ էին մնում արշավանքների ժամանակ դաժան հաշվեհարդար տեսնել այն ցեղապետերի նկատմամբ, ովքեր խոստանում էին հետագայում հոժարակամ հարկ վճարել:*

*Սարդուրի II արքան ջահով իր զինվորներին արշավանքի ելնելու նշան է անում, նկարիչ՝ Ռ. Քոչարյան*

# Դաս 11 Վանի թագավորության քաղաքակրթական ժառանգությունը

## Գիտեք, որ...

- *Էրեբունի–Երևանի ծննդյան վկայականը համարվող սեպագիր արձանագրությունը հայտնաբերվել է 1952 թ. Արին Բերդ բլրի պեղումների ժամանակ և բաղկացած էր ընդամենը 13 տողից:*
- *Մ. Խորենացու հաղորդման համաձայն՝ Տուշպա–Վան քաղաքի կառուցման համար Ասորեստանի թագուհի Շամիրամի հրամանով Ասորեստանից և նրա իշխանությանը ենթակա մյուս տեղերից բերվել են 6 հազար ընտիր փայտագործ, քարագործ, պղնձագործ և երկաթագործ արհեստավորներ:*
- *Ուրարտական դիցարանում, եթե թևավոր արևի սկավառակի մարմնավորում է Շիվինի աստվածը, ապա պաշտամունքային կաթսաների վրա հաճախակի երևացող թևավոր կնոջ պատկերներն արտացոլում են նրա կնոջը՝ Տուշպեա աստվածուհուն:*

## Լրացուցիչ նյութեր

### Էրեբունի միջնաբերդի որմնանկարը

*Էրեբունի քաղաքի միջնաբերդի շինություններից մեկում հայտնաբերվել են բազմագույն հրաշալի որմնանկարներ, որոնք կարելի է դասել Հին Արևելքի արվեստի բարձրարժեք գործերի շարքը: Այդ որմնանկարների մեջ ուրարտական ռազմիկներն են՝ գույնզգույն հագուստներով, հանդերձանքի ու զինավարժության հետաքրքիր մանրամասներով: Այստեղ, թագավորական որսի տեսարաններում ներկա է Վանի թագավորության ճաճանչափայլ արքան՝ մարտակառքի վրա, նետաձգության պատրաստ վիճակում, ինչպես նաև նրան շրջապատող մեծատոհմիկները, հետևազորը և այրուձին: Սրանք որսի շներով հետապնդում են խուճապահար փախչող հրեղեն նժույգների, վայրի ցուլերի, առյուծների ու ընձառյուծների: Այս հսկայական «կտավի» ռեալիստորեն կատարված առանձին մանրամասները զարմանք են պատճառում իրենց բարձր վարպետությամբ ու մրցում են արվեստի գործերի հետ: Նման տեսարաններ են թփուտներում թաքնվող հորթուկի, կենդանուն պատառոտած կատաղի շների, սայլապանի կամ եզներին քշող երկրագործի պատկերները: Ուրարտական որսի այս տեսարանները կրկնվում են Էրեբունի դամբարանադաշտում հայտնաբերված բրոնզե գոտիների վրա:*